

Յակոբ կաթողիկոս Զուղայեցիի զայն «ՄԵՄ ՎԱՐԺԱՊԵՏ» կոչելն արդէն ցոյց կու տայ թէ անիկա իր մահէն յիսնեակ մը տարիներ յետոյ, երբ այլևս կիրքերը և ատելութիւնները մարած էին, իր անձին շուրջը յուզուած, որքան մեծ համբաւ մը թողած էր և որքան մեծ յիշատակ, պատկառանք և յարգանք ներշնչելու համար յաջորդներուն մէջ, որպէսզի անոնք պարծանք համարէին իրենց անձը հոչակելու աշակերտները այդ մեծ վարդապետին:

Դժբախտութիւն մըն է որ լիովին ու պէտք եղած կերպով կարելի չէ ներկայացընել մարդը իր գործերով ու արդիւնքներով, թէ՛ կրթական և թէ՛ վարչական մարզի մէջ, սակայն հատուկոտորներու այս համադրութիւնն իսկ ցոյց կու տայ թէ անիկա արժէքաւոր դէմք մը եղած է, որուն անունը պէտք է օրհնութեամբ յիշուի, իբր ճշմարիտ հոգևորական մը և քաջ ախոյեան մը Հայ Եկեղեցոյ:

